ղան» ձեւերը, որ անշուշտ, մի ժամանակ եղած են «ասեղան», թիթեղան», ինչպէս մեր «ձմրան» ձեւն եղած է «ձմերան»: Ուղղական եւ սեռական միեւնոյն հին ձեւերն են, բայց տարբեր չեշտաւորութեամբ, որի պատճառով նրանք տարբեր կերպարանք առած են:

Ունինք ուրեմն՝

Ուղղակ. ձմե՛րան.— ձմեռն.

Սեռակ. ձմերա՛ն.— ձմրա՛ն:

Գալով «ձիւն» բառին՝ նրա սեռականն է «ձեա՛ն»: Մեր տեսութեան համաձայն, նրա ուղղականն եւս պէտք է լինէր «ձեան», բայց մենք ունինք «ձիւն»: Ի՞նչպէս մեկնել այս «հակասութիւնը» մեր քանաձեւած օրէնքին:

Ապացոյցները թողնելով ուրիշ տեղի եւ ժամանակի՝ ես ասում եմ. ամէն անգամ երբ երկու ձայնաւորի միջեւ չքանում է մի բաղաձայն, նրա տեղը բռնում են յ–ն կամ ւ–ը, որ լծորդ են:

Այսպէս՝ վաղեմի «մա՛տար» եւ «հա՛տար» ձեւերը դարձած են նախապէս «մա՛յար» եւ «հա՛յար»: Շեշտն առաջին վանկի վրայ գալով՝ երկրորդ վանկերը սղած են եւ բառերն ստացած են «մա՛յըր» եւ հա՛յըր» ձեւ: Այսօր մեզ համար այդ բառերը մի վանկ ունին, իբր «հայր, մայր», բայց որ երբեմն հնչուած են իբր մա՛յըր, հա՛յըր, երեւում է «հա՛յր» բառի ժողովրդական արտաբերումից, երբ այդ բառը գործ է ածւում Տէրունական աղօթքի համար. նա ասում է. «Հա՛յրը մեր» եւ ոչ «Հայր մեր»: Այս եւ սրանց նման մի քանի շատ հին բառերի սեռականները — հօր, մօր — մեզ տանում են մեր լեզուի պատմութեան հնագոյն շրջանը, երբ սեռական հոլովը կազմւում էր, ոչ թէ չեշտի փոխադրութեամբ, այլ արտաբերութեան տարբերութեամբ, ուր ուղղականի յ–ն սեռականի մէջ հնչում էր իբր ւ–:

Այսպէս՝

Ուղղական հա՛յար, մա՛յար.— հայրը, մայրը.— ծայր, մայր.

Սեռական հա՛ւար, մա՛ւար.— հա՛ւրը, մա՛ւրը.— հօր, մօր:

Բաղաձայնների այս անկման շրջանին է, որ «մրջի՛ման» դարձած է «մրջիւան.— մրջիւն, եւ «ձի՛ման» դարձած է «ձիւն»:

Նոյն երկու կիսաձայնների միջոցով հին հայը տարբերում էր տեղ–տեղ անց. անկատար ժամանակի եղ. 3–րդ դէմքի կրաւորականն ու ներգործականը, այսպէս.

Ներգործակ. տեսանէր.— տեսանէր.

Կրաւորակ. տեսանեւր.— տեսանիւր:

Ահա այս հնագոյն հոլովական կարգով է փոխւում եւ «ձիւն» բառը, որ ինչպէս տեսանք եղած է երբեմն «ձիման»: Ահաւասիկ զուգահեռը.

Ուղղակ. ձի՛ման.— ձի՛ւան.— ձիւն.

Սեռական ձիմա՛ն.— ձիյա՛ն.— ձեա՛ն:

Այս ձեւերի տարբերութիւնը «հայր — հաւր» ձեւից այն է, որ այստեղ ոչ միայն լծորդ կիսաձայներն են իրար փոխարինում, այլ եւ շեշտերն են տեղափոխւում:

Միւս տարբերութիւնն այն է, որ մինչդեռ «հայր — հաւր» ձեւերի մէջ ուղղականն է, որ յ ունի եւ սեռականն է, որ կազմուած է ւ–ով, «ձիւն» բառի մէջ հակառակն է: Բայց, որ երբեմն «ձիւն» բառն եւս ուղղականի մէջ ունեցած է յ, դրա ապացոյցն է այդ բառի գաւառական ձեւը, որ է «ձին». «Ձինն եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր». այսպէս է սկսում Խ. Աբովեանն իր Վէրք Հայաստանին: Այս ձեւը վերականգնելի է իբր մի վաղեմի «ձիյըն», ուր յ–ն ձուլուած է իր նախորդ ի–ի հետ եւ բառը դարձած է «ձի՛ն.— ձին:

Այս ձեւով կարելի է եւ պէտք է մեկնել մեր «թիւն — թեան» վերջաւորութիւնները. այսպէս՝

Ուղղ. Գիտութիմա՛ն.— գիտութի՛ւան.— գիտութիւն.

Սեռակ. Գիտութիմա՛ն.— գիտութիյա՛ն. — գիտութեան:

Ժողովուրդն արտաբերում է գիտո՛ւթին, ինչպէս ասում ձին:

Այսպիսով կարող ենք ասել, ամէն անգամ երբ պատահում են իրար ի+յ+ա՝ մեզ տալիս են եա եւ ուր հանդիպենք եա, պէտք է լուծել իբր ի+յ+ա: Մէջընթաց յ–ն կարող է զանազան ծագումներ ունենալ, այդ հանդամանքը նշանակութիւն չունի եա բաղադրութեան կազմութեան համար:

◈ ◈ ◈

Հիմա, որ պարզեցինք «ձիւն» ու «ձմեռն»